ՉՈՐՍ ԲԱԺԱԿՆԵՐ ԵՎ ՉՈՐՍ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Այս տոնից առաջ հրեաները պատրաստվում են իրենց տները մաքրելով:

Ելից 12.14-15 – 14 Այդ օրը ձեզ համար թող լինի հիշատակի համար, և տոնե՛ք այն իբրև Տիրոջ տոն, տոնե՛ք այն սերնդից սերունդ՝ իբրև հավիտենական կանոն: Յոթ օր բաղարջ հա՛ց կերեք. հենց առաջին օրը ձեր տներից դո՛ւրս գցեք թթխմորը.

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ԵԼԻՑ 6.6-7

6 Դրա համար ասա՛ Իսրայելի որդիներին. Ես եմ Տերը: Ես ձեզ հանելու եմ եգիպտացիների լծի տակից, ձեզ ազատելու եմ նրանց աշխատանքից և ձեզ փրկելու (redeem) եմ տարածած բազկով ու մեծ դատաստաններով: 7 Եվ ձեզ պիտի դարձնեմ իմ ժողովուրդը, պիտի լինեմ ձեր Աստվածը, և դուք պիտի գիտենաք, որ ես եմ Տերը՝ ձեր Աստվածը, եգիպտացիների ծանր աշխատանքի տակից ձեզ հանողը:

Ելից 12.26-27 – Եվ երբ պատահի, որ ձեր որդիները հարցնեն ձեզ. Ի՞նչ է նշանակում ձեր այս պաշտամունքը, այն ժամանակ կպատասխանեք, որ սա զատկի զոհն է Տիրոջ համար, որը Եգիպտոսում Իսրայելի որդիների տների վրայով անցավ եգիպտացիներին հարվածելիս և ազատեց մեր տները: Ժողովուրդը խոնարհվեց ու երկրպագություն արեց:

- ***Իսրայելացիները առաջին Զատիկը տոնեցին թշնամու երկրում՝ Եգիպտոսում:***

  Դու իմ առաջին սեղան ես պատրաստում իմ թշնամիների դիմաց. դու իմ գլուխն օծում ես յուղով. իմ բաժակը խիստ լիքն է: Սաղ. 23.5

1. ՍՐԲԱՑՄԱՆ ԲԱԺԱԿ – ԵՍ ՔԵԶ ԴՈՒՐՍ ԿԲԵՐԵՄ:

6 Ես ձեզ հանելու եմ եգիպտացիների բռնությունից. (Ծառայությունից)

Գաղ. 1.4 ...որ ինքն իրեն մեր մեղքերի համար տվեց, որպեսզի Աստծու և մեր Հոր կամքի համաձայն մեզ այս չար աշխարհից ազատի:

1 Կոր. 6.11 - 11 Եւ մի քանիներդ այսպէսներ էիք, բայց լվացվեցիք՝ բայց սրբուեցաք՝ բայց արդարացաք Տէր Յիսուսի անունովը եւ մեր Աստուծոյ Հոգովը:

1 Թես. 5.23 - Եւ ինքը խաղաղութեան Աստուածը ձեզ սուրբ անէ բոլորովին. եւ ձեր բոլոր հոգին եւ շունչը եւ մարմինը անարատ պահուի մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալը:

Արդարացումը և սրբացումը մարդկության համար երկու ամենակարևոր ուսմունքներնն են՝

Արդարացումը մարդուն մաքուր է հռչակում, իսկ սրբացումը մարդուն մաքուր է դարձնում: Սրբացումը ուժ է մեղքի դեմ, և դա միակ ճանապարհն է, որով Դուք երբևէ հաղթանակ կունենաք մեղքի բնույթի նկատմամբ: Սրբացումն՝ ամենակարևոր բանն է Աստծո զավակի համար:

Հարցն այն է, թե ինչպես կարող ես քեզ սրբացնել:

2. ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԲԱԺԱԿ – ԵՍ ԿԱԶԱՏԵՄ:

6 Ես ձեզ ազատելու եմ նրանց ծառայելուց.

- ***Այս բաժակի ժամանակ որդին հորը հարցնում է. Որքանո՞վ է տարբերվում այս գիշերը մյուս բոլոր գիշերներից:***

  Տիտոս 3.5 – նա ոչ թե ըստ մեր կատարած արդար գործերի մեզ փրկեց, այլ իր ողորմությամբ, վերստին ծննդյան ավազանի միջոցով և Սուրբ Հոգու նորոգությամբ:

  2 Տիմ. 4.18 - Եւ կ'փրկէ ինձ Տէրն ամեն չար բանից եւ կ'ազատէ կ'հասցնէ իր երկնային արքայությանը. որին լինի փառք հավիտյանս հավիտենից. Ամէն:

3. ՓՐԿԱԳՆԻ ԲԱԺԱԿ – ԵՍ ՔԵԶ ԵՏ ԿԳՆԵՄ:

6 ձեզ փրկելու եմ (redeem) տարածած բազկով ու մեծ դատաստաններով:

- ***Այս բաժակը խմում են ճաշից հետո Զատիկի ժամանակ: Հիսուսն այս բաժակը կապեց Նոր Ուխտի և Նրա թափած արյան հետ:***

  Ելից 12.21 – Մովսեսը կանչեց Իսրայելի բոլոր ծերերին և ասաց նրանց. Ընտրե՛ք ձեր ընտանիքներին համապատասխան մի գառ, առե՛ք և մորթե՛ք զատիկը:

  Հովհ. 1.29 – Հաջորդ օրը Հովհաննեսը տեսավ Հիսուսին, որ գալիս էր իր մոտ, ու ասաց. Ահա Աստծու Գառը, որ իր վրա է վերցնում աշխարհի մեղքը:

  1 Կոր. 5.7 - Հին խմորը մաքրե՛ք, որպեսզի նոր անթխմոր զանգված լինեք. որովհետև մեր Զատիկը՝ Քրիստոսը, մեզ համար մորթվեց:

  Ղուկաս 22.14-20 – 14 Եւ երբ ժամը հասավ, սեղան նստեց, եւ տասներկու առաքեալներն էլ՝ իր հետ: 15 Եւ նորանց ասեց. Ցանկանալով ցանկացա՝ այս զատիկը ձեզ հետ ուտել իմ չարչարվելուց առաջ: 16 Որովհետեւ ասում եմ ձեզ, թէ սորանից էլ երբէք չեմ ուտի, մինչեւ որ կատարուի Աստուծո արքայությունում:

  17 Եւ բաժակը վերցնելով, զոհություն հայտնեց Աստծուն եւ ասաց. Առէ՛ք այս եւ բաժանեցէ՛ք ձեր մէջ. 18 Որովհետեւ ասում եմ ձեզ, թէ այսուհետեւ որթատունկի բերքից չեմ խմելու, մինչեւ որ գա Աստծո արքայությունը: 19 Եւ հաց վերցնելով՝ զոհություն հայտնեց Աստծուն, կտրեց, տվեց նրանց եւ ասաց. Այս է իմ մարմինը, որ շատերի համար է տրված. այս արէ՛ք իմ հիշատակի համար: 20 Նույնպէս եւ բաժակը վերցրեց ընթրիքից հետո եւ ասաց. Այս բաժակը նոր Ուխտ է իմ արյունով՝ ձեզ համար թափուած:

  Եբրայեցիս 9.22 – Գրեթե ամեն բան ըստ օրենքի արյունով է սրբվում, և առանց արյուն թափելու թողություն չի լինում:

- ***ՏԵՐԸ ՄԵԶ ՓՐԿԵՑ ԳԱԼԻՔ ԴԱՏԱՍՏԱՆԻՑ ԵՎ ՄԵՂՔԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄՆԻ ՄԵՋ:***

  Հռոմեացիս 8.3 – Աստված հնարավոր դարձրեց՝ ուղարկելով իր Որդուն մեղավոր մարմնի նմանությամբ և մեղքի համար, և մեղքը դատապարտեց այդ մարմնի մեջ.

Բրանտ Փիթրն ասում է. «Մի խոսքով, վերջին ընթրիքի միջոցով Հիսուսը Խաչը վերածեց Զատիկի, իսկ Խաչի միջոցով Վերջին Ընթրիքը վերածեց զոհաբերության»:

4. ԳՈՀՈՒԹՅԱՆ ԲԱԺԱԿ – ԱՎԱՐՏՄԱՆ ԲԱԺԱԿ.

Եվ ձեզ պիտի դարձնեմ իմ ժողովուրդը, պիտի լինեմ ձեր Աստվածը.

- ***Զատիկի արարողությունն ավարտվում է չորրորդ բաժակով և Սաղմոսների արտասանությամբ:***

  Հետաքրքիր է, որ այս վերջին քայլից առաջ Հիսուսն ասում է.

  Մատթեոս 26.29-30 – 29 Բայց ասում եմ ձեզ. այսուհետև որթատունկի այս բերքից այլևս չեմ խմելու մինչև այն օրը, երբ ձեզ հետ նորը կխմեմ իմ Հոր արքայության մեջ:

  30 Եվ սաղմոսելուց հետո ելան Ձիթենյաց լեռը:

- ***113-114-րդ սաղմոսները երգվում էին առաջին և երկրորդ բաժակների ժամանակ, իսկ 115-118-րդ սաղմոսները՝ երրորդ և չորրորդ բաժակների ժամանակ:***

  Սաղմոս 116.13 – Փրկության բաժակը պիտի վերցնեմ և կանչեմ Տիրոջ անունը:

5. ԴԱՌԸ ԲԱԺԱԿ.

*Հովհաննես 19.28-30 – 28 Դրանից հետո Հիսուսը, իմանալով, որ ամեն ինչ արդեն կատարված է, որպեսզի իրականանա գրվածը, ասաց. Ծարավ եմ: 29 Այնտեղ քացախով լի մի աման կար. նրանք **<u>քացախով մի սպունգ</u>** թրջեցին և եղեգի ծայրին դրած՝ նրա բերանին մոտեցրին: 30 Երբ Հիսուսը քացախը բերանն առավ, ասաց. ,Կատարված է: Նա գլուխը խոնարհեց և հոգին ավանդեց:*

1. *Տերը մեզ աշխարհից դուրս բերեց:*
2. *Տերը մեզ փրկեց:*
3. *Տերը մեզ արդարացրեց:*
4. *Տերը մեզ հավիտենական կյանք խոստացավ:*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ